ԵՐԱԺՇՏԱԿԱՆ (ՆՈՏԱԳՐԱԿԱՆ) ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ ՀԱՄԱՐ

ISMN ԳՈՐԾԱԾՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ

Թարգմանված է անգլերեն 4-րդ՝ վերամշակված
հրատարակությունից
«ISMN միջազգային գործակալություն»
Բեռլին, 2008

Երևան
Հայաստանի ազգային գրապալատ
2010

ՀԴՏ 655.4/.5
ԳՄԴ 76.17

Թարգմանիչ՝ Տաթևիկ Բաղրամյան

Խմբագիր-թարգմանիչ՝ Քրիստինե Մաթևոսյան

Գլխավոր խմբագիր՝ Հովհաննես Բեքմեզյան

ISMN գործածողի ձեռնարկ. - Եր.: Հայաստանի ազգային գրապալատի հրատ., 2010. – 40 էջ:

ՀԴՏ 655.4/.5
ԳՄԴ 76.17

ISBN 978-92-990051-0-1
© ISMN միջազգային գործակալություն, 2010թ.

ISBN 978-99930-50-23-0
© Հայաստանի ազգային գրապալատ, 2010թ.

Բովանդակություն

Նախաբան

1 *Ստեղծման պատմությունը*

1.1 Տերմիններ և սահմանումներ

2 *ISMN-ի կառուցվածքը*

2.1 Տարրեր
2.1.1 Նախածանցային տարր
2.1.2 Հրատարակչի տարր
2.1.3 Նոտագրական միավորի տարր
2.1.4 Ստուգիչ թիվ
2.2 Յուրաքանչյուր տարրի նիշերի քանակը և նրանց ճանաչումը ISMN-ում

3 *ISMN-ի գործածության շրջանակը*

4 *Սկզբունքները և գործընթացը, որոնց պետք է հետևեն հրատարակիչները իրենց սեփական հրատարակությունները համարակալելիս*

4.1 Հրատարակչի տարրի նշանակումը
4.2 Ղեկավարությունը
4.3 Պարտականությունները
4.4 Գրանցում
4.5 ISMN-ը՝ որպես գույքահամար կամ թողարկման համարանիշ

5 *Չմասնակցող հրատարակիչներ*

6 *ISMN-ի կիրառումը*

6.1 Ճշգրիտ (ֆաքսիմիլային) վերատպություն և փոքրածավալ հրատարակություններ
6.2 Երաժշտական (նոտագրական) տպագրությունների կազմերի տարբեր ձևերը
6.3 Տարբեր ձևաչափեր
6.3.1 Նոտաշարը (պարտիտուրա) և նրա մասերը
6.3.2 Նոտաշարը՝ որպես ընդհանուր ստեղծագործության մաս
6.3.3 Առանձին օգտագործելի նվագաբաժիններ (պարտիաներ)
6.3.4 Առանձին և որպես հավաքածուի մի մաս օգտագործելի նվագաբաժիններ

6.3.5 Միայն որպես հավաքածուի մի մաս օգտագործելի նվագաբաժիններ
6.3.6 Որոշ նվագաբաժիններ՝ օգտագործելի առանձին, որոշները՝ միայն որպես հավաքածուի մի մաս
6.3.7 Հրատարակության բազմաթիվ պատճեններ պարունակող փաթեթներ
6.3.8 էլեկտրոնային ձևաչափեր
6.4 Տարբերակներ
6.5 Բազմահատոր հրատարակություններ
6.6 Օժանդակ նյութով հրատարակություններ
6.7 Հատընտիրներ և հատվածներ
6.8 Արխիվային ֆոնդ
6.9 Այլ հրատարակիչներից գնված իրավունքներ
6.10 Համագործակցող հրատարակչություններ
6.11 Գործակալների կողմից վաճառվող կամ տարածվող նոտագրական հրատարակություններ
6.12 Ավելի քան մեկ վայրում գործող հրատարակիչներ
6.13 ISMN-ի վերաօգտագործման արգելքը

7 *ISMN-ի տպագրությունը և հրապարակումը*

7.1 ISMN-ի տպագրությունը երաժշտական (նոտագրական) հրատարակությունների վրա
7.1.1 ISMN-ի տեղը
7.1.2 Հրատակչությանը պատկանող ISMN-ների ամբողջական ցանկը
7.2 ISMN-ի տպագրումը մեքենայաընթեռնելի ծածկագրի տեսքով
7.3 13 նիշանոց գծիկավոր ծածկագրի տրամադրում: Հրահանգներ հիմնաժապավեններ ստեղծողների համար
7.4 ISMN-ի հրապարակումը

8 *ISMN համակարգի կառավարումը*

8.1 Միջազգային կառավարում
8.2 Ազգային կամ տարածաշրջանային կառավարում

9 *ISMN-ը և այլ միջազգային ստանդարտ համարներ*

9.1 ISBN
9.2 ISSN
9.3 ISRC
9.4 ISWC
9.5 ISAN
9.6 DOI
9.7 URN

10 *Հավելված. Տասանիշ ISMN*

10.1 ISMN-ի վերափոխումը

Լրացում

Ա. Ստանդարտների ցանցը

Բ. Նվազագույն տեղեկություններ և տվյալներ ISMN-ի համար

Բ 2. ONIX

Նախաբան

ISMN-ը (Երաժշտական (նոտագրական) հրատարակությունների միջազգային ստանդարտ համար) բավականին հաջողություններ է ձեռք բերել իր գոյության 15 տարիների ընթացքում: 46 երկրներ և տարածաշրջաններ այժմ այդ համակարգի ակտիվ մասնակիցներն են: Միակ ցանկությունը՝ երաժշտական հրատարակչական բիզնեսում այն ավելի կիրառելի դարձնելն է, ինչը որ նկատվում է ISBN-ի ասպարեզում: Երաժշտական (նոտագրական) հրատարակությունը և նոտագրության կիրառումը չի կարելի համեմատել գրքերի աշխարհի հետ. նոտագրությունը ուղղված է ընտրովի մասնագիտացված լսարանին, և երաժշտական ավանդույթներ ունեցող երկրներում պատմականորեն տարբեր կառուցվածքներ են եղել նոտագրության մեջ: Այսօր նկատվում է որոշակի համաշխարհայնացում՝ կապված ինտերնետ մատակարարողների քանակի աճի հետ, որոնք առաջարկում են մեծ թվով նոտագրված երաժշտություն, այդպիսով կամուրջ ստեղծելով ավանդական երաժշտական երկրների և աշխարհի երաժշտասերների միջև: ISMN-ը իդեալական նույնականացուցիչ է ինտերնետային նյութերի համար, քանի որ այն համատեղելի է ավելի մասնագիտացված նույնականացուցիչ համակարգերի հետ:

ISMN կիրառողների ձեռնարկի նոր հրատարակության անհրաժեշտությունը պայմանավորված էր ISMN ստանդարտի (ISO 10957) վերանայմամբ, որը նախկին տասանիշ համարը փոխեց 13 նիշով՝ ISBN-ի համակարգին համապատասխան:

Ձեռնարկները անփոփոխ չեն, նրանք մշտապես գտնվում են վերանայման գործընթացի մեջ՝ հնարավորին չափ ավելի օգտակար և ընթացիկ կարիքներին համապատասխան դարձնելու համար: Հետևաբար, նաև ներկայիս հրատարակությունը վերջնական տարբերակը չէ: Ամենաթարմ տաբերակը կարելի է գտնել ISMN միջազգային գործակալության ինտերնետային կայքում (http://ismn-international.org):

Բեռլին, 3 ապրիլի, 2008թ. *Հարթմութ Վալրավենս*

1 *Ստեղծման պատմությունը*

Երբ պարզվեց, որ ISBN-ը նպատակահարմար միջոց է գրքի վաճառքի համար, երաժշտական գործերի հրատարակիչները նոտագրված երաժշտության համար նույնպես ստեղծեցին նմանատիպ ստանդարտ թիվ: Քննարկման շրջանակներում բանավեճի առիթ հանդիսացավ այն, թե բավարա՞ր է արդյոք պարզ նույնականացուցիչ համարը, թե՞ անհրաժեշտություն կլինի մատենագիտական ծածկագրի, որը կներկայացնի կապը ամբողջականի և առանձին հատվածների միջև: Երբ «Երաժշտական գրադարանավարների, արխիվների և փաստաթղթերի կենտրոնների միջազգային ասոցիացիայի» (IAML) բրիտանական մասնաճյուղը դիմեց ISBN միջազգային գործակալությանը՝ առաջարկելով տասանիշ համար առանց մատենագիտական ծածկագրերի, նախագիծը հրատարակվեց ISBN-ի ամփոփագրում և անմիջապես ստացավ մեծ արձագանք: ISO/TC 46-ը պաշտոնապես ընդունեց առաջարկը որպես աշխատանքային նախագիծ, և Օտտավայում եվրոպական և հյուսիսամերիկյան փորձագետների հանդիպման ժամանակ՝ բուռն քննարկումներից հետո, համաձայնություն ձեռք բերվեց եվրոպական, ինչպես նաև ամերիկյան հրատարակիչների և մասնագետների միջև: Մատենագիտական ծածկագրի գաղափարից հրաժարվելու գլխավոր փաստարկը ISBN-ի երկարամյա փորձն էր և տասանիշ համարի միաձուլումը 13 նիշանոց միջազգային գծիկավոր ծածկագրի համակրգին՝ պարզապես ընդլայնելով «Bookland»-ի ոլորտը:

ISMN նախագիծը մշակվեց ISO-ի աշխատանքային խմբերի կողմից ռեկորդային ժամանակահատվածում և պաշտոնապես հասանելի դարձավ 1993թ. վերջերին, երբ ստանդարտը հրատարակվեց Ժնևում:

ISMN-ը առաջարկում է երաժշտական (նոտագրական) հրատարակությունների, երաժշտական շուկայի և երաժշտական գրադարանների ամբողջական ռացիոնալիզացման տարբերակներ:

Ի սկզբանե ISMN-ը տասանիշ համակարգ էր (տե՛ս գլուխ 10, Հավելված. Տասանիշ ISMN): 2008 թվականից ISMN-ը փոխվել է 13 նիշանոց համակարգի: ISMN-ը սկսվում է EAN/Bookland-ի «979» նախածանցով, որին հաջորդում է «0»-ն: «0»-ն փոխարինում է տասանիշ համակարգում գործածվող նախկին «M» տառին: Ցանկացած 13 նիշանոց ISMN սկսվում է 979-0-ով:

Ի տարբերություն ISBN-ի, ISMN ստանդարտում խմբային համար գոյություն չունի՝ հիմք ընդունելով նոտաների միջազգային լինելը:

Նախկին տասանիշ ISMN-ը, որը փոխարինվել է 13 նիշանոց ISMN-ով, պահպանում է նույն ստուգիչ թիվը: *Խնդրում ենք ի նկատի*

ունենալ, որ այն տարբերվում է ISBN-ի հին տասանիշ համարի 13 նիշանոց համարի վերափոխման ձևից, որը պահանջում է ստուգիչ թվի վերահաշվարկ:

1.1 Տերմիններ և սահմանումներ

Սույն փաստաթղթում կիրառվում են հետևյալ տերմիններն ու սահմանումները.

Հրատարակություն՝

նոտագրված երաժշտական աղբյուրի բոլոր պատճենները՝ տպագրված նույն բնագրից և հրատարակված նույն իրավաբանական անձի կամ իրավաբանական անձանց խմբի կողմից: Այն ներառում է վաճառքի, վարձույթի, անվճար կամ միայն հեղինակային իրավունքի նպատակներին վերաբերող նյութերը:

Նոտագրական միավոր՝

նոտագրված երաժշտության հրատարակություն կամ վերջինիս օգտագործելի առանձին բաղկացուցիչ մաս:

Նոտագրված երաժշտություն՝

ցանկացած ձևաչափով երաժշտության գրաֆիկական արտահայտություն:

2 ISMN-ի կառուցվածքը

Երաժշտական (նոտագրական) միջազգային ստանդարտ համարը (ISMN) բաղկացած է «979-0» նախածանցից, որին հաջորդում է 9 նիշ: Թե՛ գրավոր, թե՛ տպագիր տարբերակում համարին պետք է նախորդեն «ISMN» տառերը:

Այն երկրներում, որտեղ չի կիրառվում լատիներեն այբուբենը, տեղական ձեռագրի կրճատ տարբերակը կարող է կիրառվել ի հավելում լատիներեն «ISMN» տառերին:

2.1 Տարրեր

ISMN-ը բաժանվում է 4 տարրի, որից երկուսը ունեն փոփոխական երկարություն: Տպագրված ISMN-ի յուրաքանչյուր տարր առանձնացվում է գծիկով կամ բացատով: Չորս տարրերն են.

2.1.1 Նախածանցային տարր

«979-0» նախածանցը տարբերակում է ISMN-ը ISBN-ից: 979-ը ներկայացնում է Bookland-ի դաշտը EAN (GS1) գծիկավոր ծածկագրի համակարգի շրջանակներում, իսկ «0»-ն խորհրդանշում է ISMN-ի համար սահմանված թվերի ընդհանուր առաջին տասնյակը:

2.1.2 Հրատարակչի տարր

Այս տարրը նույնականացնում է որոշակի հրատարակչի: Այն բնորոշում է տվյալ նոտագրական հրատարակության հրատարակչին: Մեծածավալ արտադրողականությամբ հրատարակիչներին հատկացվում է հրատարակչի կարճ տարր, փոքրածավալներին՝ երկար (տե՛ս բաժին 2):

2.1.3 Նոտագրական միավորի տարր

Այս տարրը նույնականացնում է նոտագրված երաժշտական հրատարակությունը, որը կարող է ներկայացնել ամբողջական նոտաշար (պարտիտուրա), փոքրածավալ ստեղծագործություններ, փողային ստեղծագործությունների շարք, հոբոյի ստեղծագործություններ և այլն: Նոտագրական միավորը, համաձայն ստանդարտի, առանձին վաճառվող կամ օգտագործելի երաժշտական (նոտագրական) հրատարակության բաղկացուցիչ մասն է:

Նոտագրական միավորի տարրը նշանակվում է որոշակի ստեղծագործությանը հրատարակչի կողմից՝ իրեն տրամադրված համարախմբից: Նոտագրական միավորի տարրի երկարությունը հակադարձ համեմատական է հրատարակչի տարրի երկարությանը:

Նոտագրական միավորի տարրերը սովորաբար նշանակվում են հրատարակիչների կողմից (չմասնակցող հրատարակիչների համար տե՛ս բաժին 5-ը): Հրատարակիչները, որոնք իրենք են նշանակում սեփական նոտագրական միավորի տարրը, կարող են օգտագործել դրանք հրատարակչությունում նյութերը նույնականացնելու համար՝ ըստ իրենց

հայեցողության, օրինակ՝ նյութեր, որ լույս են տեսնում միայն պատվերով և այլն:

2.1.4 Ստուգիչ թիվ

Ստուգիչ թիվը հաշվվում է մոդուլ 10-ով՝ 3 և 1 թվերի փոփոխվող հաջորդականությամբ, նշվելով ձախից աջ և սկսվելով «9»ով:

Սա նշանակում է, որ ISMN-ի առաջին 12 նիշերից յուրաքանչյուրը (բացառությամբ ստուգիչ թիվը) բազմապատկվում է ձախից աջ 3 և 1 թվերի փոփոխվող հաջորդականությամբ: Ստացված արտադրյալների գումարը՝ գումարած ստուգիչ թիվը, պետք է առանց մնացորդի բաժանվի 10-ի:

Օր.՝

նախածանցային տարր	հրատարակչի տարր	նոտագրական միավորի տարր	ստուգիչ թիվ
9 7 9 0	3 4 5 2	4 6 8 0	5

Բազմապատկիչ	1	3	1	3	1	3	1	3	1	3	1	3	
Արտադրյալ	9	21	9	0	3	12	5	6	4	18	8	0	= 95

Հանրագումար՝ 95 + 5 = 100 - - > 5 = ստուգիչ թիվ

Քանի որ 100-ը կարող է բաժանվել 10-ի առանց մնացորդի, ապա 979-0-3452-4680-5-ը վավերական Երաժշտական (նոտագրական) միջազգային ստանդարտ համար է:

2.2 Յուրաքանչյուր տարրի նիշերի քանակը և նրանց ճանաչումը ISMN-ում

Հրատարակչի և նյութի տարրերի թվերի քանակը փոփոխական է, թեև նիշերի ընդհանուր քանակը այս տարրերում միշտ ութն է: Այս ութ նիշերը «979-0» նախածանցի և ստուգիչ թվի հետ միասին ISMN-ում նիշերի ընդհանուր քանակը հասցնում են 13-ի:

Մեծածավալ արտադրողականություն ունեցող հրատարակիչները կստանան 3 կամ 4 նիշերով համարներ: Փոքրածավալ

արտադրողականությամբ հրատարակիչները կստանան 5, 6 և 7 նիշերով համարներ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս հրատարակչի տարրերի դասավորվածությունը՝ ի համեմատ նյութի նույնականացման համար նախատեսված ընդհանուր համարների:

Հրատարակչի տարր	*Նյութի նույնականացման համար նախատեսված ընդհանուր համարներ*
000 - 099	100000
1000 - 3999	10000
40000 - 69999	1000
700000 - 899999	100
9000000 - 9999999	10

Տպվածը հեշտությամբ կարդալու համար ISMN-ի չորս տարրերը բաժանվում են գծիկներով կամ բացատներով: Այս անջատումը, այնուամենայնիվ, չի պահպանվում համակարգչում, որը ճանաչում է տարրերը սահմանված համարախմբերի հիման վրա:

Նայելով ISMN 9790299102349-ին՝ հասկանալի է դառնում, որ չի կարող լինել հրատարակիչ 299 կամ 29910 նույնականացուցիչով, սակայն հրատարակչի նույնականացուցիչը կարող է լինել 2991-ը:

3 ISMN-ի գործածության շրջանակը

ISMN-ը կիրառվում է նույնականացնելու նոտագրված երաժշտական հրատարակությունը՝ անկախ նրանից, թե այն նպատակաուղղված է վաճառքի, վարձույթի, անվճար տրամադրման, թե՝ միայն հեղինակային (պատճենահանման) իրավունքի համար:

ISMN-ը նախատեսված չէ ձայներիզների կամ տեսաերիզների համար՝ բացառությամբ ստորև նշված հազվադեպ դեպքերի: Առանձին ձայներիզը նույնականացվում է Ձայնագրման միջազգային ստանդարտ ծածկագրով (ISRC), իսկ տեսալսողական արտադրանքը նույնականացվում է Տեսալսողական միջազգային ստանդարտ համարով (ISAN): ISMN-ը չի կիրառվում երաժշտության մասին գրքերի համար, որոնք ստանում են Գրքի միջազգային ստանդարտ համար (ISBN) (տե՛ս բաժին 9 տարբեր տեսակի ստանդարտ համարների համար):

Հրատարակության յուրաքանչյուր բաղկացուցիչ մաս, որն առանձին կիրառելի է, պետք է ստանա իր սեփական ISMN-ը: Համարակալվող նյութերի ցանկը ներառում է՝

- նոտաշարեր,
- մանրանվագներ (էտյուդներ),
- վոկալային նոտաշարեր,
- երաժշտական նվագաբաժինների (պարտիաների) հավաքածու,
- առանձին օգտագործելի նվագաբաժիններ,
- փոփ ֆոլիոներ (pop folios),
- հատընտիրներ,
- այլ արտահայտման միջոցներ, որոնք կազմում են նոտագրված երաժշտական հրատարակության անբաժանելի բաղկացուցիչ մաս (օր.՝ ձայնագրություն, որը կազմում է ստեղծագործության «մասերից» մեկը),
- նոտագրված երաժշտության հետ միասին հրատարակված երգերի տեքստեր կամ քնարերգություն (եթե առանձին օգտագործելի է),
- նոտագրված երաժշտության հետ տպագրված մեկնաբանություններ (նույնպես կիրառելի առանձին),
- երգերի ժողովածու (ոչ պարտադիր) (տե՛ս բաժին 9.1),
- փոքր չափսերի երաժշտական (նոտագրական) հրատարակություններ,
- բրայլային երաժշտական (նոտագրական) հրատարակություններ,
- երաժշտական նոտագրությունների էլեկտրոնային հրատարակություններ:

Երաժշտության վերաբերյալ գրքերի համար տե՛ս հետևյալ ցանկը:

Հետևյալ հրատարակություններին <u>չպետք է</u> տրվի ISMN.

- երաժշտության մասին գրքեր՝ բացառությամբ նոտագրված երաժշտության օրինակներ պարունակողների,
- առանձին ձայնա կամ տեսաերիզներ (ներառյալ համակարգչի միջոցով հասանելի ձայնագրություններ),
- պարբերականներ և շարքեր որպես ամբողջական հրատարակություն՝ ի տարբերություն շարքերում որպես առանձին հատոր հանդես եկող հրատարակությունների (տե՛ս բաժին 9.2):

4 Սկզբունքները և գործընթացը, որոնց պետք է հետևեն հրատարակիչները իրենց սեփական հրատարակությունները համարակալելիս

4.1 Հրատարակչի տարրի նշանակումը

Հրատարակչին տրամադրվում է հրատարակչի տարր ազգային կամ տարածքային գործակալությունների կողմից, ըստ որի կսահմանվի տվյալ հրատարակչի համար նախատեսված նոտագրական միավորի տարրերի համարախումբը: Նոտագրական միավորի տարրերի քանակը կախված է հրատարակչի տարրի երկարությունից: Հրատարակիչը պետք է գործակալությանը տրամադրի հնարավորինս շատ տեղեկություն առկա հրատարակությունների ցուցակների վերաբերյալ, ինչպես նաև ներկա և գալիք հրատարակչական ծրագրերի մասին, որպեսզի հնարավոր լինի հատկացնել համապատասխան հրատարակչի տարր: *Ավելի քան մեկ վայրում հրարակչություն ունեցող հրատարակչիների համար տե՛ս բաժին 6.12:*

4.2 Ղեկավարությունը

Հրատարակիչները պարտավոր են նշանակել իրենց կողմից հրատարակվող առանձին նյութերին նոտագրական միավորի տարր: Խորհուրդ է տրվում ISMN նշանակել, երբ հրատարակման ժամկետը արդեն սահմանված է տվյալ նյութի համար:

4.3 Պարտականությունները

Հրատարակիչները պետք է նշանակեն ISMN-ների հատկացման և առնչվող կանոնների կիրառման համար պատասխանատու անձ:

4.4 Գրանցում

Յուրաքանչյուր հրատարակիչ պետք է ունենա արդեն նշանակված ISMN-ների գրանցամատյան: Գրանցումը պետք է ներառի ISMN-ը, հեղինակին, վերնագիրը և ձևաչափը (երբ անհրաժեշտ է):

4.5 ISMN-ը՝ որպես գույքահամար կամ թողարկման համարանիշ

Հրատարակիչները կարող են օգտագործել կամ հարմարեցնել ISMN-ը որպես գույքահամար կամ թողարկման համար: Հրատարակիչները, որոնք կցանկանան պահպանել նախկին գույքահամարը կամ թողարկման համարը, ի լրումն ISMN-ի, պետք է կարողանան փոխադրել համարակալման համակարգերը:

5 Չմասնակցող հրատարակիչներ

Եթե ընտրությամբ կամ ցանկացած ուրիշ պատճառով, հրատարակիչը չի կրում իր հրատարակություններին ISMN նշանակելու պատասխանատվությունը, ապա ազգային կամ տարածաշրջանային գործակալությունը ունի երկընտրանք՝

(1)

Խմբային գործակալությունը կարող է բաշխել թվերի մի խումբ զանազան հրատարակիչների համար և համարակալել բոլոր վերնագրերը այդ խմբում՝ անկախ հրատարակչից: Տվյալ պարագայում ISMN-ը չի նույնականացնի տվյալ վերնագրի հրատարակչին:

Խորհուրդ է տրվում այս գործընթացը կիրառել այն հրատարակիչների համար, ովքեր հազվադեպ են հրատարակում և հավանաբար երբեք չեն ստանձնի ինքնուրույն համարակալման պարտականությունը:

(2)

Խմբային գործակալությունը կարող է ստանձնել հրատարակչի տարրը նշանակելու, ինչպես նաև այդ տարրի հետ կապված ISMN-ների խմբի նշանակելու պարտականությունը, յուրաքանչյուր հրատարակությանը համար հատկացնել և նախքան նշանակելը տեղեկացնել հրատարակչին:

Նման դեպքերում, եթե հրատարակիչը համաձայն է, ISMN-ը կարող է տպվել հրատարակության վրա: Շատ հավանական է, որ տվյալ հրատարակիչը ի վերջո պատասխանատվություն կվերցնի նշանակելու իր սեփական ISMN-ը:

6 ISMN-ի կիրառումը

Նոտագրական միավորի յուրաքանչյուր տարբեր հրատարակությանը պետք է հատկացվի առանձին ISMN: Մասնավորապես նոր ISMN է պահանջվում, երբ՝

- ստեղծագործության երաժշտական կամ տեքստային հատվածներում կան փոփոխություններ,
- հրատարակված երաժշտական ստեղծագործության բաղադրիչ մաս կազմող տեքտը փոփոխվում է,
- տեքստային թարգմանությունը փոփոխվում է, հավելվում կամ ջնջվում: Նոր ISMN պետք է նշանակվի, նույնիսկ եթե տեքստը և/կամ երաժշտությունը այլ ձևով չի փոփոխվում,
- նյութի չափսերը էականորեն փոխվում են նոր ծավալուն հրատարակություն կամ նոտաների փոքրիկ հրատարակություն ստեղծելու համար:

Նույն ձևաչափով և նույն հրատարակչի կողմից տվյալ նյութի անփոփոխ տպագրումը կամ անփոփոխ վերատպումը չի պահանջում նոր ISMN (եթե կազմում փոփոխություն չկա, ինչպես որ սահմանված է բաժին 6.2-ում): Նմանապես, նույն կազմակերպության պահանջով տրամադրված նոր վերարտադրության համար չպետք է նշանակվի ISMN, եթե նույնիսկ վերատադրության օրը նշված է տվյալ վերարտադրության վրա:

Գնի փոփոխությունը չի պահանջում նոր ISMN-ի նշանակում:

6.1 Ճշգրիտ (ֆաքսիմիլային) վերատպություն և փոքրածավալ հրատարակություններ

Մեկ այլ հրատարակչի կողմից տպված ճշգրիտ վերատպությանը պետք է նշանակվի առանձին ISMN:

Փոքրածավալ հրատարկությանը պետք է նշանակվի առանձին ISMN:

6.2 Երաժշտական (նոտագրական) տպագրությունների կազմերի տարբեր ձևերը

Առանձին ISMN է նշանակվում տարբեր կազմերով լույս տեսած յուրաքանչյուր վերնագրին, եթե նույնիսկ բովանդակությունը նույնն է:

Օրինակ՝ կոշտ կազմով և թղթե կազմով հրատարակությունները պետք է ստանան առանձին ISMN:

Ամբողջական նոտաշար (թղթե կազմով)	= 4 ISMN
Ամբողջական նոտաշար և մեկնաբանություններ (տուփով)	
Վոկալային նոտաշար (թղթե կազմով)	
Վոկալային նոտաշար (շապկակազմով)	
Գործիքային նոտաշար (թղթե կազմով)	= 2 ISMN
Գործիքային նոտաշար (առանց կազմի)	

Կազմի ձևավորման փոփոխությունը, որտեղ նյութի բովանդակությունը չի փոխվում, ինչպես նաև նախորդ հրատարակությունների և հաջորդ հրատարակության միջև գույնի և այլ աննշան տարբերությունները չեն համարվում կազմի փոփոխություն և չեն պահանջում նոր ISMN: *Նոտագրված երաժշտության էլեկտրոնային տարբերակի տարբեր ձևաչափերի համար տե՛ս բաժին 6.3.8:*

6.3 Տարբեր ձևաչափեր

Յուրաքանչյուր առանձին վաճառվող հրատարակություն կամ հրատարակության առանձին կիրառվող բաղադրիչ մաս պետք է ստանա առանձին ISMN:

Խորհուրդ է տրվում հրատարակության նմանատիպ բաղադրիչ մասերին նշանակված ISMN-ների ցանկը տպագրել այդ բաղադրիչներից մեկում կամ մի քանիսում:

6.3.1 Նոտաշարը (պարտիտուրա) և նրա մասերը

Նոտաշարերից և նրա մասերից բաղկացած հրատարակությունները, ամբողջական նոտաշարերը, նվագաբաժինների հավաքածուները և յուրաքանչյուր առանձին բաժին (եթե կիրառելի է առանձին) պետք է ստանան իրենց ISMN-ը:

Ամբողջական նոտաշար	= 4 ISMN
Վոկալային նոտաշար	
Երգչախմբային նվագաբաժինների հավաքածու	
Առանձին երգչախմբային նվագաբաժիններ	

6.3.2 Նոտաշարը՝ որպես ընդհանուր ստեղծագործության մաս

Եթե նոտաշարը հանդիսանում է հավաքածուի (լրակազմի) նոտագրական միավոր և ոչ թե որպես ինքնուրույն վաճառվող նյութ, ապա այս դեպքում նշանակվում է հավաքածուի ISMN:

Դաշնամուրային նոտաշար և երկու նվագաբաժիններից բաղկացած լրակազմ	= 1 ISMN

Ամեն դեպքում, եթե նոտաշարը օգտագործելի դառնա որպես առանձին նյութ, ապա նրան պետք է նշանակվի առանձին ISMN:

Եթե նոտաշարը օգտագործելի է և՛ որպես առանձին նյութ, և՛ որպես հավաքածուի (լրակազմի) մաս, ապա այն պետք է ունենա իր առանձին ISMN-ը:

նոտաշար	= 2 ISMN
նոտաշար և նվագաբաժիններ (ամբողջական)	

Նոտաշարը պետք է ստանա մեկ ISMN, ամբողջական հավաքածուն (լրակազմը)՝ մեկ այլ:

6.3.3 Առանձին օգտագործելի նվագաբաժիններ (պարտիաներ)

ISMN պետք է նշանակվի առանձին միավոր հանդիսացող յուրաքանչյուր տպագրված մասին (նվագաբաժնին):

Զուրակ՝ մաս 1	= 4 ISMN
Զուրակ՝ մաս 2	
Ալտ	
Թավջուրակ	

6.3.4 Առանձին և որպես հավաքածուի մի մաս օգտագործելի նվագաբաժիններ

Եթե ստեղծագործության նվագաբաժինները օգտագործելի են և՛ որպես առանձին միավորներ, և՛ որպես հավաքածուի մի մաս, ապա ISMN պետք է նշանակվի և՛ հավաքածուին, և՛ առանձին նվագաբաժիններին:

Զուրակի մաս (նվագաբաժին)	= 4 ISMN
Ալտի մաս	
Թավջուրակի մաս	
Մասերի հավաքածու (լրակազմ)	

6.3.5 Միայն որպես հավաքածուի մի մաս օգտագործելի նվագաբաժիններ

Եթե գործիքային կամ վոկալային նվագաբաժիններն առանձին-առանձին կիրառելի չեն, ապա ISMN պետք է նշանակվի ընդհանուր հավաքածուին, իսկ հավաքածուի յուրաքանչյուր տպված նվագաբաժին պետք է կրի հավաքածուին նշանակված ISMN-ը:

Նոտաշար	= 2 ISMN
Նվագաբաժինների հավաքածու	

Նոտաշարը կստանա իր սեփական ISMN-ը, իսկ յուրաքանչյուր առանձին մաս (նվագաբաժին) միայն հավաքածուին նշանակված ISMN-ը:

Ծանոթ. Եթե հավաքածուի մասերը կիրառելի են դառնում նաև հավաքածուից դուրս՝ որպես առանձին միավորներ, ապա վերջիններիս նշանակվում է առանձին ISMN:

6.3.6 Որոշ նվագաբաժիններ՝ օգտագործելի առանձին, որոշները՝ միայն որպես հավաքածուի մի մաս

Եթե հավաքածուի մասերից մի քանիսը օգտագործելի են որպես առանձին միավորներ, իսկ մյուսները ոչ, ապա առանձին նյութեր հանդիսացող մասերին պետք է նշանակվի առանձին ISMN-ներ: Մյուս մասերը ստանում են հավաքածուի ISMN-ը:

Նոտաշար	= 6 ISMN
Նվագաբաժինների ամբողջական հավաքածու	
Ոչ լարային գործիքների հավաքածու	
Ջութակ՝ մաս 1-ին	
Ջութակ՝ մաս 2-րդ	
Թավջութակ / բասային նվագաբաժին	

6.3.7 Հրատարակության բազմաթիվ պատճեններ պարունակող փաթեթներ

Եթե առանձին նյութը կարող է կիրառվել նաև փաթեթի կազմում, որը միայն պարունակում է նյութի բազմաթիվ պատճեններ, ապա փաթեթին պետք է նշանակվի առանձին ISMN:

Թերթոն, մեկ օրինակ	= 2 ISMN
Թերթոն, 100 օրինակից բաղկացած փաթեթ	

6.3.8 Էլեկտրոնային ձևաչափեր

Էլեկտրոնային տարբերակով երաժշտական նյութը նույն ձևով է դիտվում, ինչպես տպագրված տարբերակը: Եթե կա ներբեռնման

հնարավորություն տարբեր ձևաչափերի համար, ապա խորհուրդ է տրվում նշանակել առանձին ISMN-ներ՝ շփոթություններից խուսափելու համար:

6.4 Տարբերակներ

Եթե հրատարակիչը տպագրում է նյութը ավելի քան մեկ գործիքավորմամբ կամ տարբերակով, ապա նրանցից յուրաքանչյուրին պետք է նշանակվի առանձին ISMN:

Դաշնամուրի մենանվագ	= 3 ISMN
Դաշնամուրի զուգանվագի տարբերակ	
Երգեհոնային մենանվագ	
Բարձր ձայն	= 2 ISMN
Միջին ձայն	

6.5 Բազմահատոր հրատարակություններ

ISMN պետք է նշանակվի բազմահատոր հրատարակության հատորների ամբողջական լրակազմին, ինչպես նաև յուրաքանչյուր առանձին հատորին (տե՛ս բաժին 9.2):

Հատոր 1-3 (լրակազմ)	= 4 ISMN
Հատոր 1	
Հատոր 2	
Հատոր 3	

Նոտաշար և մեկնաբանություն (լրակազմ)	3 ISMN
Նոտաշար	
մեկնաբանություն (որպես առանձին նյութ)	

Եթե հատորներից մեկը տեքստային տպագրություն է, ապա այն կարող է ստանալ նաև ISBN:

6.6 Օժանդակ նյութով հրատարակություններ

Եթե նոտագրված երաժշտական հրատարակությունը ներառում է օժանդակ նյութեր, ինչպիսիք են՝ առանձին տպված երգի տեքստեր, քնարերգություն, մեկնաբանություններ կամ նմանատիպ այլ նյութեր, և եթե տվյալ նյութերը վաճառվում են միայն փաթեթի կազմում, ապա օժանդակ նյութը ստանում է նույն՝ հատորին նշանակված ISMN-ը:

Նոտաշար	= 1 ISMN
Մեկնաբանություն (որպես առանձին նյութ կիրառելի չէ)	
Ձայնային և ստեղնաշարային նվագաբաժին	= 1 ISMN
Քնարերգական նյութ (որպես առանձին նյութ կիրառելի չէ)	

Եթե օժանդակ նյութերը վաճառվում են և՛ միասին, և՛ առանձին, ապա հրատարակությունը պետք է դիտարկել որպես բազմահատոր հրատարակություն (տե՛ս բաժին 6.5):

6.7 Հատընտիրներ և հատվածներ

Հատընտիրները և հատվածները պետք է ստանան իրենց առանձին ISMN-ը՝ անկախ այն հանգամանքից, թե հատընտիրում կամ ավելի ծավալուն ստեղծագործության մեջ զետեղված նյութերը նախկինում տպագրված եղել են, թե վաղուց տպագրությունից դուրս են եկել:

Նախկինում առանձին նյութին տրված ISMN-ը կարող է զետեղվել նոր հրատարակության վրա, օրինակ՝ նոտաների յուրաքանչյուր հատվածի առաջին էջի ներքևի մասում: Նման ISMN-ները պետք է հստակ տարբերակվեն նոր հրատարակության ISMN-ից:

6.8 Արխիվային ֆոնդ

Հրատարակիչներին խորհուրդ է տրվում համարակալել իրենց արխիվները և հրատարակել իրենց ISMN-ները տեղեկագրերում, ինչպես նաև տպագրել ISMN-ը արխիվային ֆոնդից վերցված նյութի առաջին վերահրատարակությունում:

6.9 Այլ հրատարակիչներից գնված իրավունքներ

Եթե հրատարկիչը՝ ներառյալ վաճառքի բացառիկ իրավունքներ ունեցող գործակալը, մեկ այլ հրատարակչից գնում է որևէ երաժշտական ստեղծագործության իրավունքը և հրատարակում է տվյալ ստեղծագործությունը իր կազմակերպության անվան տակ, ապա հրատարակությանը պետք է նշանակվի նոր ISMN նոր հրատարակչի կողմից: Եթե իրավունքը գնել են մի քանի հրատարակիչներ, ապա նրանցից յուրաքանչյուրը պետք է նշանակի իր սեփական ISMN-ը:

6.10 Համագործակցող հրատարակչություններ

Եթե հրատարակությունը համատեղ հրատարկություն է կամ տպագրված է մի քանի հրատարակիչների կողմից, ապա մասնակից հրատարակիչներից յուրաքանչյուրը կարող է նշանակել իր ISMN-ը: Ելից տեղեկություններում նշված բոլոր հրատարակիչների ISMN-ները պետք է տպված լինեն հրատարակության մեջ և հստակ նույնականացվեն:

6.11 Գործակալների կողմից վաճառվող կամ տարածվող նոտագրական հրատարակություններ

Համաձայն ISMN համակարգի սկզբունքների՝ որոշակի հրատարակչի կողմից հրատարակված յուրաքանչյուր հրատարակություն ստանում է միայն մեկ ISMN: Տվյալ ISMN-ը պետք է պահպանվի անկախ այն բանից, թե որտեղ և ում կողմից է նոտագրությունը տարածվում կամ վաճառվում: Միայն հետևյալ բացառիկ դեպքերում համարը կարող է նշանակվել տարածողի կողմից.

- եթե նոտագրված երաժշտական հրատարակությունը ներմուծվում է բացառիկ տարածողի կամ գործակալի կողմից այնպիսի մի տարածաշրջանից, որը դեռևս ընդգրկված չէ ISMN համակարգում և, հետևաբար, ISMN նշանակված չի եղել: Տվյալ դեպքում ISMN-ը կարող է նշանակվել տարածողի կողմից,
- եթե նոտագրված երաժշտական հրատարակությունը ներմուծվում է մի քանի տարածողների կողմից այնպիսի մի տարածաշրջանից, որը դեռևս ընդգրկված չէ ISMN համակարգում և, հետևաբար, ISMN նշանակված չի եղել: Այս դեպքում ISMN-ը կարող է նշանակվել ազգային կամ տարածաշրջանի գործակալության կողմից, որոնց անդամներն են հանդիսանում տվյալ տարածողները:

6.12 Ավելի քան մեկ վայրում գործող հրատարակիչներ

Հրատարակիչը, որն իր գործունեությունը ծավալում է մի քանի վայրերում, որոնք նշված են հրատարակման տեղեկություններում, հրատարակությանը պետք է նշանակի միայն մեկ ISMN:

Այն հրատարակիչը, որն աշխատեցնում է առանձին և անջատ գործակալություններ կամ մասնաճյուղեր տարբեր վայրերում, յուրաքանչյուր գործակալության կամ մասնաճյուղի համար կարող է ունենալ առանձին հրատարակչի տարր: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր հրատարակության պետք է նշանակվի միայն մեկ ISMN, և այդ նշանակումը պետք է կատարավի այն գործակալության կամ մասնաճյուղի կողմից, որը պատասխանատվություն է կրում տվյալ հրատարակության համար:

6.13 ISMN-ի վերաօգտագործման արգելքը

Մեկ անգամ նշանակված ISMN-ը ոչ մի հանգամանքներում չպետք է վերստին օգտագործվի: Սա շատ կարևոր է շփոթմունքներից խուսափելու համար: Եթե համարը սխալ է նշանակված, ապա այն պետք է հանել պիտանի համարների ցանկից և այն պետք չէ նշանակել մեկ այլ հրատարակության: Հրատարակիչներն իրենց համարախմբերում ունեն բավարար քանակությամբ համարներ, և այդ կորուստը աննշան է նրանց համար:

Հրատարակիչները պետք է տեղեկացնեն ազգային կամ տարածաշրջանային գործակալություններին չեղյալ ճանաչված համարների և այն հրատարակությունների մասին, որոնց սխալմամբ նշանակվել են վերոհիշյալ համարները:

7 ISMN-ի տպագրությունը և հրապարակումը

ISMN-ը պետք է տպված լինի անմիջապես նյութի վրա: Դա էական է համակարգի աշխատանքի որակյալ ընթացքի համար: Այն պետք է միշտ տպված լինի դյուրընթեռնելի (9 կետաչափով կամ ավելի մեծ):

7.1 ISMN-ի տպագրությունը երաժշտական (նոտագրական) հրատարակությունների վրա

7.1.1 ISMN-ի տեղը

- ISMN-ը պետք է զետեղված լինի նոտաշարի կամ երաժշտական նվագաբաժնի հետևի մասում:
- Նախընտրելի է ISMN-ը տպել հեղինակային իրավունքի նշանի հետ միասին:
- Եթե հնարավոր չէ ISMN-ի տպումը նշված տեղերում, ապա այն պետք է տպել որևէ երևացող տեղ (օր.՝ նոտագրության առաջին էջի ներքևի մասում):
- Եթե նյութը բաղկացած է մեկ էջից, ապա ISMN-ը նյութի վրա պետք է նշել միայն մեկ տեղ:
- Եթե նոտագրական միավորը պարունակում է էլեկտրոնային ձևով արտահայտված նյութ (օրինակ՝ առցանց նյութ), ապա ISMN-ը պետք է տեղադրվի այն էլեկտրոնային էջի վրա, որը ցուցադրում է վերնագիրը կամ դրա համարժեքը (օր.՝ գլխավոր էջի և/կամ այն էլեկտրոնային էջի վրա, որտեղ նշված է հեղինակային իրավունքի նշանը):
- Բազմահատոր լրակազմի յուրաքանչյուր հատորը պետք է ունենա յուրաքանչյուր հատորին նշանակված, ինչպես նաև ամբողջական շարքին հատկացված ISMN-ների ցանկը: Շարքում ընդգրկված նյութը նաև պետք է կրի շարքին պատկանող այլ առանձին նյութերի ISMN-ների ցանկը:
- Եթե նյութը հատընտիր է, ապա վերջինիս ISMN-ը պետք է հստակ տարբերվի հատընտիրում ընդգրկված յուրաքանչյուր այլ առանձին նյութերին նշանակված ISMN-ներից:
- Եթե նյութը, բացի ISMN-ից, ունի այլ նույնականացուցիչ, ապա տվյալ համարները պետք է իրար մոտ տպվեն: Յուրաքանչյուր միջազգային ստանդարտ համարին պետք է նախորդի համապատասխան հապավումը (օր.՝ ISBN, ISSN, ISRC, ISAN, ISWC, կամ ISMN տառերը):

7.1.2 Հրատակչությանը պատկանող ISMN-ների ամբողջական ցանկը

Խորհուրդ է տրվում համապատասխան բնորոշմամբ հրատարակության բաղկացուցիչ մասերին նշանակված ISMN-ների ցանկը նշել նյութերից առնվազն մեկի վրա: Եթե հնարավոր է, ապա նախընտրելի է, որ նույն ցանկը տպվի նաև մեկ այլ նյութի կամ նյութերի վրա:

Օրինակ՝

- ISMN 979-0-321-76543-6 (նոտաշար)
- ISMN 979-0-321-76544-3 (վոկալային նոտաշար)

- ISMN 979-0-321-76545-0 (նվագաբաժինների հավաքածու)

Այս ցանկը պետք է լինի առնվազն նոտաշարի, նախընտրելի է նաև վոկալային նոտաշարի, հնարավորին դեպքում՝ յուրաքանչյուր մասի վրա:

- ISMN 979-0-321-76546-7 (նոտաշար, կոշտ կազմով)
- ISMN 979-0-321-76547-4 (նոտաշար, փափուկ կազմով)

Այս ցանկը պետք է նշվի և՛ կոշտ կազմով, և՛ փափուկ կազմով նոտաշարի վրա:

- ISMN 979-0-321-76546-1 (հավաքածու)
- ISMN 979-0-321-76547-8 (հատոր 1)
- ISMN 979-0-321-76548-4 (հատոր 2)
- ISMN 979-0-321-76549-0 (հատոր 3)

Այս ցուցակը պետք է նշվի բոլոր երեք հատորների վրա: Յուրաքանչյուր հատորի վրա պետք է նշված լինեն առնվազն հավաքածուի և ընթացիկ հատորի ISMN-ները: Բազմահատոր հրատարակությունների համար տե՛ս բաժին 6.5:

Եթե երաժշտական նվագաբաժինների հավաքածուն տարածվում է փաթեթով, ապա հավաքածուի ISMN-ը պետք է տպված լինի փաթեթի ընդհանուր կազմաշապիկի վրա: Եթե նվագաբաժիններից յուրաքանչյուրը կիրառելի է որպես առանձին միավոր, ապա առանձին նվագաբաժինների ISMN-ները նույնպես պետք է տպվեն փաթեթի կազմաշապիկի վրա:

7.2 ISMN-ի տպագրումը մեքենայաընթեռնելի ծածկագրի տեսքով

OCR-ի (նշանների օպտիկական ճանաչում) նպատակների համար ISMN-ը պետք է տպվի OCR-B ձևաչափով: Գծիկավոր ծածկագրի տեսածրման արագ տարածումը նախընտրելի է դարձնում միջազգային 13 նիշանոց գծիկավոր ծածկագրի կիրառումը: Բոլոր այս գծիկավոր ծածկագրերը սկսվում են ազգային նույնականացուցիչով՝ բացառությամբ գրքերի, պարբերականների և նոտագրությունների վրա տպվածների: Գրքային շուկայի միջազգային ցանցում «bookland» են համարվում 978 և 979-1-ից մինչև 979-9-ը նախածանցային տարր ունեցող գրքերը, 979-0-ով սկսվող նոտագրված երաժշտական հրատարակությունները և 977-ով սկսվող պարբերականները:

13 նիշանոց ISMN-ը համընկնում է bookland-ի ISMN-ի հետ՝ գծիկավոր ծածկագրի նպատակների համար:

Գծիկավոր ծածկագրի պատկերով տպված ISMN-ը ունի հետևյալ տեսքը՝

ISMN 979-0-2600-0043-8

9 790260 000438

7.3 13 նիշանոց գծիկավոր ծածկագրի տրամադրում: Հրահանգներ հիմնաժապավենների ստեղծողների համար

Հրատարակիչներին՝ արտադրանքի վրա ISMN գծիկավոր ծածկագրի տպագրման նպատակով, հիմնաժապավենը (film master) տրամադրելու համար պետք է պահպանել հետևյալ ընթացակարգը.

- Վավերացնել ISMN-ը, որը տրամադրել է հրատարակիչը՝ օգտագործելով ISMN ստուգիչ թվի վավերացման ընթացակարգը՝ խուսափելու համար որևէ վերարտադրման կամ վերադասավորման սխալներից (տե՛ս ստուգիչ թվի հաշվարկման ալգորիթմը):
- Տպել հետևյալը.

1. ISMN-ը՝ ընթեռնելի թվերով (OCR-B),
2. ISMN bookland-ը գծիկավոր ծածկագրով,
3. ISMN bookland-ը ընթեռնելի թվերով:

Ողջ ընթացակարգը պետք է իրագործվի համակարգչային ծրագրավորմամբ: Պետք է պահպանվեն գծիկավոր ծածկագրի տպման համար EAN-ի կողմից սահմանված տեխնիկական պահանջները:

Մեքենայաընթեռնելի ձևով տպված ISMN-ները նույնպես հանդիսանում են այս ձեռնարկում ներկայացված կանոնների առարկա: Հավելյալ կանոնների և խորհուրդների մեծ քանակությունը ստիպում է ISMN-ը տեսածրային տառատեսակով տպագրողներին հաշվի առնել իրենց տեղական գործակալությունների կարծիքը, ինչպես նաև տեղեկացնել իրենց տարածքում գծիկավոր ծածկագրի ստեղծողների անունների մասին:

7.4 ISMN-ի հրապարակումը

ISMN-ները պետք է երևան հրատարակիչների գովազդային նյութերի, տեղեկագրերի և արխիվային ցուցակների, ինչպես նաև թերթոնների, բրոշյուրների և այլ հանրային և շուկայավարության մասին նյութերի վրա:

Ցանկալի է, որ այս նյութերի վրա ISMN-ը տպվի տեսանելի տեղում՝ վերնագրին և նյութի անոտացիային մոտ:

ISMN-ը պետք է տպվի ամբողջությամբ, թեև «ISMN» տառերի բացթողումը նույնպես ընդունելի է, եթե հասկանալի է, որ տրամադրված թիվը երաժշտական (նոտագրական) միջազգային ստանդարտ համար է:

8 ISMN համակարգի կառավարում

ISMN համակարգի կառավարման աշխատանքներն իրականացվում են 3 մակարդակներով՝ միջազգային, ազգային կամ տարածաշրջանային և հրատակչի:

8.1 Միջազգային կառավարում

Համակարգի միջազգային կառավարումը իրականացվում է ISMN միջազգային գործակալության կողմից, որն անդամակցային ասոցիացիա է: Բոլոր ISMN գործակալությունները հանդես են գալիս որպես անդամներ:

Ասոցիացիայի ղեկավար մարմիններն են՝ Խորհուրդը և Գագաթնաժողովը: Խորհուրդը բաղկացած է 3 անդամներից՝ նախագահ, փոխնախագահ և գանձապահ: Նախագահը կամ փոխնախագահը ներկայացնում են Ասոցիացիան: Գանձապահը Խորհրդի երկու անդամներից մեկի հետ ներկայացնում է Ասոցիացիան: Իրենց պարտականություններն իրականացնելու համար Խորհուրդը կարող է դիմել երրորդ կազմակերպության օգնությանը:

Խորհուրդը վարում է Ասոցիացիայի գործունեությունը և պատասխանատվություն է կրում այն բոլոր խնդիրների համար, որոնք վերապահված չեն Ասոցիացիայի այլ մարմիններին: Առաջին հերթին այն ունի հետևյալ պարտականությունները.

ա. նախապատրաստել և գումարել Գագաթնաժողովը, կազմել օրակարգը,
բ. ներկայացնել տարեկան հաշվետվություններ և զեկույցներ,
գ. ներկայացնել բյուջեն,
դ. նշանակել գործակալության ղեկավարին:

Տարեկան Գագաթնաժողովը կայացնում է բոլոր որոշումները, վերահսկում է բյուջեն և մասնավորապես պատասխանատու է.

ա. Խորհրդի և երկու վերահսկիչ անդամների ընտրության,
բ. Խորհրդի կողմից ներակայացվող առաջարկների մասին որոշում կայացնելու,
գ. անդամավճարների հաստատման,
դ. բյուջետային նախագծի հաստատման,
ե. վերջին Գագաթնաժողովի արձանագրությունների հաստատման,
զ. տարեկան հաշվետվության համար արտաքին վերահսկիչ նշանակելու,
է. տարեկան հաշվետվությունների և տարեկան զեկույցների ընդունման և հաստատման,
ը. Խորհրդի արձակման,
թ. կանոնադրությունում փոփոխություններին վերաբերող որոշումների ընդունման,
ժ. Ասոցիացիայի լուծարման մասին որոշում կայացնելու համար:

ISMN միջազգային գործակալության հասցեն է՝

ISMN միջազգային գործակալություն
Schloss str. 50
12165 Berlin (Germany)
Tel.: +49 30 7974 5002
Fax: +49 30 7974 5254

E-mail: ismn@ismn-international.org
http://ismn-international.org

ISMN միջազգային գործակալության հիմնական գործառույթներն են՝

- ղեկավարել համակարգի կիրառումը,
- հաստատել ազգային և տարածաշրջանային գործակալությունների լիազորությունները և կառուցվածքը,
- հատկացնել նույնականացուցիչներ ազգային և տարածաշրջանային գործակալություններին,

- ազգային և տարածաշրջանային գործակալություններին խորհրդատվություն մատուցել հրատարակչի տարրերի նշանակման հարցում,
- նպաստել համակարգի կիրառման տարածմանը,
- խնդիրների լուծման համար ընտրել մասնագետների միջազգային խորհուրդ,
- նպաստել տեղեկատվության փոխանակմանը՝ հրատարակությունների և տարածաշրջանային ժողովների միջոցով,
- հրատարակել և պարբերաբար թարմացնել հրահանգների ձեռնարկը,
- համակարգել ISMN գծիկավոր ծածկագրի կիրառումը:

ISMN միաջազգային գործակալությունն առաջարկում է հետևյալ հավելյալ ծառայությունները.

- ապահովում է ազգային և տարածաշրջանային գործակալություններին ISMN-ների ցանկով (ստուգիչ թվերի հետ միասին)՝ իրենց տարածքում գործող հրատարակիչների կիրառման համար կամ տվյալ նպատակի համար տրամադրում է անհրաժեշտ ծրագիր,
- հատկացնում է միջազգային և տարածաշրջանային գործակալությունների կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա հրատարակվող միջազգային երաժշտական (նոտագրական) հրատարակչությունների ուղեցույցը,
- տրամադրում է անվավեր կամ կրկնվող ISMN-ների ցուցակը՝ հիմնվելով ազգային և տարածաշրջանային գործակալությունների կողմից հատկացված տեղեկատվության վրա:

8.2 Ազգային կամ տարածաշրջանային կառավարում

Հրատարակչի տարրի նշանակումը և ISMN համակարգում հրատարակիչների հետ կապը սովորաբար իրականացնում է ազգային կամ տարածաշրջանային գործակալությունը: Ազգային կամ տարածաշրջանային գործակալությունները նշանակվում են ISMN միջազգային գործակալության կողմից՝ պայմանագրի հիման վրա և, այսպիսով, դառնում համակարգի անդամ:

Ազգային կամ տարածաշրջանային գործակալությունների գործառույթներն են՝

- իրենց տարածքում կամ երկրում հրատարակիչների հետ կապ հաստատել և համակարգը ներկայացնել նոր հրատարակիչներին,
- իրենց տարածքի կամ երկրի հրատարակիչների անունից հարաբերություններ հաստատել ISMN միջազգային գործակալության հետ,
- խորհրդակցելով առևտրային կազմակերպությունների և հրատարակիչների հետ՝ սահմանել պահանջվող հրատարակչի տարրի համարախումբը,
- նշանակել հրատարակչի տարր այն հրատարակիչներին, որոնք իրավասու են միանալու իրենց երկրում կամ շրջանում գործող համակարգին և ունենալ գրանցամատյան տվյալ հրատարակիչների և իրենց հրատարակչի տարրերի վերաբերյալ,
- առևտրային կազմակերպությունների և հրատարակիչների հետ խորհրդատվության արդյունքում որոշել, թե որ հրատարակիչները կարող են նշանակել համարներ իրենց սեփական հրատարակություններին, և որ հրատարակիչները պետք է ունենան ազգային կամ տարածաշրջանային գործակալության կողմից նշանակված համարներ իրենց հրատարակությունների համար,
- հրատարակիչներին տրամադրել տեխնիկական խորհուրդներ և աջակցություն՝ հետևելով ստանդարտների և հաստատված գործընթացների պահպանմանը,
- ապահովել հրատարակիչներին հրահանգների ձեռնարկով՝ մայրենի լեզվով,
- իրենց սեփական հրատարակությունները համարակալելու համար պատրաստել ISMN-ների ցուցակներ՝ նախօրոք հաշվված ստուգիչ թվերով,
- վավերացնել հրատարակիչների կողմից իրենց հրատարակություններին նշանակված բոլոր ISMN-ները և պահել գրանցումներ վերջիններիս վերաբերյալ,
- տեղեկացնել հրատարկիչներին իրենց կողմից նշանակված անվավեր կամ կրկնվող ISMN-ների վերաբերյալ,
- նշանակել համարներ ինքնուրույն սեփական ISMN-ներ չնշանակող հրատարակիչներին և խորհրդատվություն տրամադրել տվյալ հրատարակիչներին՝ նշանակված ISMN-ների վերաբերյալ,
- իրենց երկրում կամ տարածաշրջանում հասնել նոտագրական հրատարակությունների ամբողջական համարակալման,
- նոտագրությունների ցանկերի համաձայն, մատենագիտական գործակալությունների հետ իրականացնել ISMN-ների հրապարակումները՝ իրենց վերնագրերով,
- հրատարակիչների հետ կանոնակարգել արդեն տպագրված հրատարակությունների ցանկի համարակալումը և դրանց

հրապարակումները համապատասխան առևտրացանկերում և մատենաշարերում,

- աջակցել առևտրին՝ համակարգչային համակարգում ISMN-ի կիրառման գործում,
- ISMN միջազգային գործակալությանը կանոնավոր և անվճար հիմունքներով ապահովել հրատարակիչների համարախմբերի և հասցեների մասին տեղեկատվությամբ՝ ISMN երաժշտական (նոտագրական) հրատարակչությունների տեղեկագրում ընդգրկելու նպատակով,
- ISMN միջազգային գործակալությանը կանոնավոր կերպով տեղեկացնել սեփական գործունեության և տարածքում կամ շրջանում ISMN համակարգի ընթացիկ վիճակի մասին,
- ֆինանսապես աջակցել ISMN միջազգային գործակալության պահպանմանը:

9 ISMN-ը և այլ միջազգային ստանդարտ համարներ

9.1 ISBN

Որոշ երաժշտական (նոտագրական) հրատարակություններ կարող են տարածվել գրքի շուկայի միջոցով: Գրքի շուկայի համար երաժշտական (նոտագրական) նյութեր թողարկող հրատարակիչները ISMN-ի հետ համատեղ կարող են նշանակել նաև ISBN (Գրքի միջազգային ստանդարտ համար):

Երբեմն դժվար է որոշել, արդյոք հրատարակությունը (օր.՝ երգարան, օրհներգերի գիրք կամ ալբոմ՝ ընդարձակ տեքստային կամ նկարազարդող նյութերով) երաժշտական (նոտագրական) հրատարակություն է, «սովորական» գիրք, թե՝ երկուսը միասին: Նման դեպքերում կարելի է նշանակել և՛ ISBN, և՛ ISMN: Եթե հրատարակիչը ցանկանում է նշանակել միայն մեկ համար, ապա ընտրությունը կատարվում է համաձայն իր հայեցողության, սակայն ISMN-ը նախընտրելի տարբերակ է:

ISBN-ի կիրառման նկարագրությունը տրված է առանձին գրքույկով: ISBN համակարգը ղեկարվարվում է ISBN միջազգային գործակալության, խմբային գործակալությունների և ազգային գործակալությունների կողմից: ISBN միջազգային գործակալության հասցեն է՝

International ISBN Agency
c/o EDItEUR

39-41 North Road
London N7 9DP
United Kingdom
tel:+ 44 (0) 207 607 0021
fax: + 44 (0) 207 607 0415
e-mail: brian@isbn-international.org
http://isbn-international.org

ISBN-ը և ISMN-ը, եթե երկուսն էլ նշանակված են, պետք է տպվեն հրատարակության վրա և պետք է հստակ նույնականացված լինեն:

9.2 ISSN

ISMN-ից և ISBN-ից բացի, գոյություն ունի համարակալման համակարգ շարունակական աղբյուրների համար (նախկինում՝ պարբերական հրատարակություններ)՝ Պարբերականի միջազգային ստանդարտ համար (ISSN):

Շարունակական աղբյուրների մի մասը (պարբերական հրատարակությունները) սահմանվում է որպես հրատարակություն, որը, անկախ ձևից, թողարկվում է հաջորդական մասերով, հաճախ կրում է թվային կամ ժամանակային նշում և նախատեսված է լինել շարունակական առանց կանխորոշված ավարտի: Պարբերական հրատարակությունները պետք է տարբերվեն բազմահատոր հրատարակություններից, որոնք նախատեսված են լինել ամբողջական՝ հատորների սահմանափակ քանակությամբ (տե՛ս բաժին 6.5):

Շարունակական հրատարակությունները ներառում են պարբերականներ և շարքեր: Նոտագրված երաժշտության պարբերականները սակավաթիվ են, սակայն բազմաթիվ երաժշտական (նոտագրական) հրատարակություններ թողարկվում են շարքերով: Երկու տարբերակներն էլ պետք է ստանան ISSN շարքի վերնագրի համար, որը կմնա անփոփոխ պարբերականի կամ շարքի առանձին հատորների բոլոր թողարկումներում, ինչպես նաև ISMN՝ շարքի յուրաքանչյուր առանձին նյութի համար: Եթե շարքի վերնագիրը փոխվում է, ապա պետք է նշանակել նոր ISSN:

ISSN համակարգը, որը կոչվում է ISSN Ցանց, ղեկավարվում է ISSN Միջազգային կենտրոնի կողմից, որի հասցեն է՝

ISSN International Centre
20, Rue Bachaumont
75002 Paris

France
tel.: +33 1 44 88 22 20
fax: + 33 1 40 26 32 43
e-mail: issnic@issn.org
http:// www.issn.org

Շարունակական հրատարակությունների հրատարակիչները ISSN-ների համար պետք է դիմեն ISSN Միջազգային կենտրոն կամ իրենց ազգային ISSN կենտրոնին՝ վերջինիս առկայության դեպքում: Հրատարակիչները չեն կարող իրենք ISSN նշանակել: ISSN-ը և ISMN-ը, եթե երկուսն էլ նշանակված են, պետք է տպվեն հրատարակության վրա և պետք է հստակ տարբերակված լինեն:

9.3 ISRC

ISMN-ը ստեղծված չէ ձայնագրությունների կամ տեսագրությունների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կազմում են նոտագրված երաժշտական հրատարակության մի մաս (տե՛ս բաժին 3): Ձայնագրման միջազգային ստանդարտ ծածկագիրը (ISRC) համարակալում է ստեղծագործության յուրաքանչյուր ձայնագրությունը (բայց հաճախ ոչ ֆիզիկական միավորը), անկախ բովանդակությունից կամ կրիչից, որի վրա այն թողարկված է: ISRC կարող է մշտական ծածկագրվել արտադրանքի վրա՝ որպես թվային դրոշմ: ISRC համակարգը ղեկավարվում է IFPI-ի (Ձայնագրվածքի (phonogram) և տեսագրվածքի (videogram) արդյունաբերության միջազգային ֆեդերացիա) կողմից:

ISRC միջազգային գործակալություն
c/o IFPI Քարտուղարություն
10 Piccadilly
London W1J0DD
United Kingdom
tel: + 44 0 20 78 787950
fax: +44 0 20 78 78 6832
e-mail: isrc@ifpi.irg
http:// www.ifpi.org/isrc

9.4 ISWC

Երաժշտական ստեղծագործությունների միջազգային ստանդարտ ծածկագիրը (ISWC) (ISO 15707) համարակալող համակարգ է, որը թույլ է տալիս երաժշտական գործերի նույնականացումը (այստեղ

«գործ» տերմինը վերաբերում է ստեղծագործությանը որպես այդպիսին, ոչ թե դրա տարբեր դրսևորումներին, թողարկումներին կամ օրինակներին): Այն անհրաժեշտ է հեղինակային իրավունքի հարցի կարգավորման համար: ISWC-ը սկսվում է «T» տառով, որին հաջորդում է 9 նիշերից բաղկացած շարքը և վերջին ստուգիչ թիվը: ISWC պահպանվում է նշանակված երաժշտական ստեղծագործության վրա համաշխարհային մասշտաբով: Ցանկացած երաժշտական ստեղծագործություն՝ հրատարակված կամ ոչ հրատարակված, նոր ստեղծված կամ արդեն իսկ գոյություն ունեցող, ISWC-ի իրավունք ունի: Նույնը վերաբերում է երաժշտական գործիքավորումներին: ISWC ղեկավարվում է CISAC-ի կողմից՝

20/26 Boulevard du Parc
92200 Neuilly-sur-Seine
France
tel.: + 33 1 55 62 08 50
fax: + 33 1 55 62 08 60
e-mail: info@iswc.org
http://www.iswc.org

9.5 ISAN

Տեսաձայնային միջազգային ստանդարտ համարը (ISAN) (ISO 15706) կիրառվում է բոլոր տեսաձայնային արտադրանքների համար: «Տեսաձայնային արտադրանք» տերմինը վերաբերում է այն արտադրանքին, որը բաղկացած է պատկերների անիմացիոն շարքից՝ անկախ ձայնային ուղեկցության առկայությունից: ISAN-ը նույնականացնում է ստեղծագործությունները և ոչ թե հրատարակությունները կամ հեռարձակումները՝ որպես իրենց ֆիզիկական դրսևորումներ: ISAN-ը հնարավորություն է տալիս բոլոր իրավասուներին (հեղինակներ, մեկնաբաններ, պրոդյուսերներ) նույնականացնելու տեսաձայնային ստեղծագործությունը:

ISAN-ը ղեկավարվում է ISAN միջազգային գործակալության կողմից՝

ISAN միջազգային գործակալություն
30, rue de Saint Jean
1203 Geneva
Switzerland
tel.: +41 22 5451000
fax: +41 22 5451040
e-mail: info@isan.org
http://www.isan.org

9.6 DOI

DOI-ը (Թվայնացված օբյեկտի նույնականացուցիչ) ստեղծվել է հրատարակչական արդյունաբերության կողմից՝ նույնականացնելու էլեկտրոնային հրատարակությունները, հատկապես առցանց տարբերակով, թվային ցանցում կիրառելու համար: DOI-ը նշանակվում է բովանդակությանը՝ հնարավորություն տալով բովանդակության հեղինակին մեծացնելու իր հնարավորությունը էլեկտրոնային առևտրի ոլորտում: Այն թույլ է տալիս արդյունավետ կերպով կանոնակարգել թվայնացված օբյեկտների բովանդակությունը ցանկացած տարբերակով, կապ հաստատել օգտվողների և բովանդակության հեղինակների միջև, հեշտացնում է էլեկտրոնային առևտուրը և թույլ է տալիս հեղինակային իրավունքի հարցի ավտոմատացված կարգավորում բոլոր տեսակի լրատվամիջոցների համար:

DOI-ը ղեկավարվում է `

Միջազգային DOI Հիմնադրամ
5, Linkside Avenue
Oxford, 0OX2 8HY
United Kingdom
tel.: +44 1865 559070
e-mail: n.paskin@doi.org
http://www.doi.org

DOI-ը համատեղելի է ISMN-ի հետ. այն կարող է ընդգրկել ISMN-ը և հրատարակչական արդյունաբերությունում կիրառվող այլ ստանդարտ նույնականացուցիչները:

9.7 URN

URN-երը (Ռեսուրսի միասնականացված անունները) հանդիսանում են մշտական նույնականացուցիչներ տեղեկատվական աղբյուրների համար: Ինտերնետային առաջադրանքների իրագործման կոմիտեն (IETF) նախաձեռնեց այն 1996 թվականին՝ նշանակելով URN աշխատանքային խումբ:

URN-ը այնպիսի մի համակարգ է, որը կարող է ընդգրկել առկա ցանկացած նույնականացուցիչ համակարգ՝ ներառյալ DOI-երը: Յուրաքանչյուր URN-ը բաղկացած է երեք մասերից՝ «u r n» տառերից, անվանման նույնականացուցչից (NID) և անվանման որոշակի շարքից (NSS), ինչպես որ սահմանված է Ինտերնետային ստանդարտ RFC 2141-

ում: NSS-ը պարունակում է նույնականացուցիչ, ինչպիսին ISMN-ն է: Անվան նույնականացուցիչը եզակի է. նույնականացնող համակարգի համար գրանցված անուն՝ կիրառվող որպես URN:

URN-երը ինտերնետային հիմքով բանաձևերի հուսալի ծառայության հնարավորություն են տալիս: Այն հնարավորություն կտա վերականգնելու կամ աղբյուրը, նրա նկարագրությունը, կամ URL-ների ցանկը, որտեղից էլ կարելի է գտնել փաստաթուղթը: Կիրառողների տեսանկյունից URN-ի օգտագործումը շատ դյուրին կլինի: Դիտարկչի պատուհանում URL-ների մուտքագրման փոխարեն ապագա կիրառողները կարող են մուտքագրել URN-ները: Այս ծառայությունը հիմնված կլինի ստանդարտ ինտերնետային ծառայությունների՝ HTTP և Տիրույթի անվան ծառայության՝ DNS-ի վրա:

10 Հավելված. Տասանիշ ISMN

Իր գոյության 15 տարիների ընթացքում ISMN-ը ունեցել է տասանիշ ձևաչափ: Առաջին տարրը անփոփոխ «M»-ն էր՝ *Music* բառից: 13 նիշանոց ISMN-ը տասանիշ դարձնելու համար պետք է սկզբնական «979-0»-ն փոխարինել «M»-ով:

Տասանիշ ISMN-ը 13 նիշանոցի վերածելու համար պետք է փոխարինել «M» տառը «979-0»-ով:

Ստանդարտի վերանայմանը հանգեցրին ISBN-ում տեղի ունեցած փոփոխությունները: Քանի որ համարանիշի կիրառումը, հատկապես տարածման ոլորտում, թելադրված էր ISBN համակարգի պահանջներով, տասանիշ համարները խնդիրներ էին առաջացնում: Այսպիսով, 13 նիշանոց ձևաչափը երաշխավորում է համատեղելիությունը առևտրային ոլորտում կիրառման հետ:

10.1 ISMN-ի վերափոխումը

Հրատարակիչներին խորհուրդ է տրվում իրենց բոլոր փաստաթղթերում տասանիշ ISMN-ները վերափոխել 13 նիշանոցի: Ուղեցույցերի, գրադարանային քարտադարանների, ազգային մատենագիտության ISMN-ները փոփոխման ենթակա չեն:

Հրատարակիչները և գրախանութները կարող են կիրառել կպչուն թղթեր նոտագրությունների վրա նոր ISMN-ը և գծիկավոր ծածկագիրը ցուցադրելու համար:

Լրացում

Ա. Ստանդարտների ցանցը



ISNI	Անվան միջազգային ստանդարտ նույնականացուցիչ
ISWC	Երաժշտական ստեղծագործության միջազգային ստանդարտ ծածկագիր
ISTC	Տեքստային ստեղծագործության միջազգային ստանդարտ ծածկագիր
ISAN	Տեսաձայնային միջազգային ստանդարտ համար
ISMN	Երաժշտական (նոտագրական) հրատարակությունների միջազգային ստանդարտ համար
ISBN	Գրքի միջազգային ստանդարտ համար
ISSN	Պարբերականի միջազգային ստանդարտ համար
ISRC	Ձայնագրության միջազգային ստանդարտ համար
URN	Ռեսուրսի միասնականացված անուն
NBN	Ազգային մատենագիտական համար
DOI	Թվայնացված օբյեկտի նույնականացուցիչ

Բ. 1. Նվազագույն տեղեկություններ և տվյալներ ISMN-ի համար

ISMN-ի նշանակմանը վերաբերող տվյալները պետք է պահպանվեն ISMN-ի գրանցման գործակալության կամ ISMN նշանակող մատենագիտական գործակալության կողմից:

Քանի որ ISMN-ի գրանցման գործակալությունները ղեկավարվում են ազգային գրադարանների, մատենագիտական կենտրոնների կամ առևտրային ասոցիացիաների կողմից, այդ իսկ պատճառով խորհուրդ է տրվում կիրառել գրադարանային քարտադարանների ծածկագրեր կամ տվյալների ընդարձակ սխեմաներ առևտրային ուղեցույցերի համար: Ստորև բերված հիմնական տվյալների ցանկը տրված է լուսաբանման նպատակների համար:

Նվազագույն տվյալների ցանկը

Տվյալների տարր	**Մեկնաբանություններ**
ISMN	Նշանակված ISMN-ի գրանցման գործակալության կողմից
Արտադրանքի ձև	Ծածկագիրը, որը ցույց է տալիս արտադրանքի ձևաչափը և/կամ կրիչը
Վերնագիր	Հրատարակության վերնագիրը՝ ենթավերնագրերի հետ միասին, եթե կիրառելի են
ISWC	Երաժշտական ստեղծագործության բովանդակության ISWC համարը, եթե կիրառելի է
Շարքերի վերնագիր և համարակալում	Եթե կիրառելի է
Ներդրող	Ներդրողի կարգավիճակի ծածկագիրը/երը և ներդրողի անունը/ները
Հրատարակություն	Հրատարակության համարը (կիրառելի առաջին հրատարակումից հետո), ձևը և ուղերձը
Տեքստի լեզուն	ISO 639-2/B լեզվի ծածկագրերի օգտագործումը

Ելից տվյալներ	Այն կազմակերպության անունը, որի անվամբ հրատարկությունը հրատարակվել է
Նոտագրված երաժշտության ձևաչափը	Ստեղծագործության հատուկ երաժշտական նոտագրական ձևաչափը՝ տարբերակող նույն ստեղծագործության այլ ձևաչափերից (օր.՝ ամբողջական նոտաշար, նոտաներ և նվագաբաժինների հավաքածու)
Հրատարակիչ	Անձը կամ կազմակերպությունը, որը հրատարակության պահին հանդիսանում է այն անվան սեփականատերը, որով հրատարակվում է տվյալ գիրքը
Հրատարակության երկիրը	ISO 3166-1 երկրի ծածկագրերի կիրառումը
Հրատարակության ամսաթիվը	Տվյալ ISMN-ով առաջին հրատարակության ամսաթիվը: ISO 8601 ձևաչափում (տարի-ամիս-օր)
Պնակի համարը	Հատկապես, երբ պնակի համարը կազմում է ISMN-ի մի մաս (եթե կիրառելի է)
Աղբյուր հանդիսացող հրատարակության ISMN-ը	Աղբյուր հանդիսացող հրատարակության ISMN-ը, որի մի մասն է կազմում տվյալ հրատարակությունը, եթե կիրառելի է

Բ. 2. ONIX

ONIX-ը XML հիմքով ստանդարտների համակարգ է՝ կոչված հաղորդակից դարձնելու գրքերի, պարբերականների և այլ հրատարակված միջոցների մասին տվյալները: ONIX-ը մշակվել և պահպանվել է EDItEUR-ի՝ հրատարակության ստանդարտների միջազգային մարմնի կողմից՝ այլ կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով:

Գրքերի համար ONIX-ը միջազգային ստանդարտ է՝ ներկայացնելու և հաղորդակցելու գրքի արդյունաբերության արտադրանքի վերաբերյալ տեղեկատվություն էլեկտրոնային տարբերակով: Ստնադարտը մշակվել է ստանդարտ ձևաչափում

էլեկտրոնային տարբերակով հրատարակիչների, մատենագիտական գործակալությունների, գրավաճառների և մեծածախ առևտրով զբաղվողների միջև արտադրանքի տեղեկատվության հատկացման պահանջներին համապատասխան: Այն հնարավորություն է տալիս, որ արտադրանքի վերաբերյալ տեղեկատվությունը գործի ավտոմատ ձևով՝ ուղեցույցերում, ինտերնետի գրավաճառային կայքերում և այլ գովազդող նյութերում կիրառելու համար: Գրքերի համար ONIX-ը շատ երկրներում՝ ներառյալ Ավստրալիան, Կանադան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Կորեայի Հանրապետությունը, Նիդեռլանդները, Նորվեգիան, Ռուսաստանը, Իսպանիան, Շվեդիան, Միացյալ Թագավորությունները և Միացյալ Նահանգները, հանդիսանում է գրքի առևտրի ստանդարտ:

Թեև գրքերի համար ONIX-ը տվյալ պահին չի ներառում բոլոր տարրերը ISMN-ի նվազագույն տվյալների ցանկում, սակայն տպագրված նոտագրությունների համար ONIX-ը՝ պահանջարկի դեպքում, կարող է բավականին հեշտությամբ մշակվել:

(ONIX-ի վերաբերյալ տեքստը՝ Բրայան Գրին)